

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ՏԱՊԱՍ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/55 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>Հանդերձարանի պահարան՝ Պահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18 մմ հաստությամբ ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Պահարանի արտաքին չափսերը՝ 1608x400x1680 մմ (LxԽxԲ): Հանդերձարանի պահարանը ունի 300x400x500մմ (LxԽxԲ) չափսերի (Ներսի) 15 հատ կտրտված, իրարից առանձնացված, համարակալված, անհատական օգտագործման համար նախատեսված սեկցիաներ, որոնք փակվում են եզրերը մշակված մեկական բռնակով դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիներով: Հանդերձարանի պահարանի հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ՓՏՍ-ի գույնի: Այն ողջ պարագծով պետք է ունենա ուղղանկյունաձև ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 1500x380x100 մմ (LxԽxԲ), որի հատակին հավող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկ մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Մատակարարումը ըստ ուսումնական հաստատությունների /պատվիրատուի կողմից տրամադրված բաշխման ցանկին և մատակարարման ժամկետներին համապատասխան/ պետք է իրականացնի Մատակարարն իր միջոցների հաշվին: Չափաբաժինների համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Մատակարարման օրվանից, երաշխիքային ժամկետի</p>

ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել սորով:  
Չափաբաժիններում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը  $\pm 3\%$ :





